



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

Ի ՅՈՒՆՎԱՐ 1901

(ԹԻԻ 20)



ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

61րորդ Յողուածը. — Բացասութիւն մը, Ե. Սրմաբէշխանլեան. —
Զղագորութիւն, Խարդկ. — Մարդահամարը (Կազմուի հիւղէ իւլ), Տիգ-
րան Աճէմեան. — Դասակիները, Ե. Սրմաբէշխանլեան :

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Շ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ունէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուրկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք:
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք:
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ՇԱ.Ի.Ի.Ղ” ձեռքէ չի ծախուիր:

Բաժնեգին, նամակ, յօդուած, լրագիր և գիրք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան:

Շարիղի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատա-
րակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան:

ՇԱԽԻՂ

ՀԱՆԴԵՍ ԳԻՍԱՄՍԵԱՅ

ԳԻՍԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ՅՈՒՆՎԱՐ 1901

Թի 20

61^{րդ} ՅՕԴՈՒԱԾԸ

Մեզիւրեքի վերջին թիւին մէջ այս խորագրով հրատարակուած յօդուած մը թարգմանաբար կը գնենք հոս, նախ անոր համար որ երիտասարդ-թուրքերու անուանական պետին Ան-մէտ-Տիզաի կարծիքը ծանօթ ՅՆրորդ յօդուածի մասին հետաքրքրաշարժ է գիտնալ. եւ յետոյ որովհետեւ հոն ճիշտ ու անկեղծ գծերու տակ յստակօրէն կարտայայտուի ուղղութիւնն այն գրութեան որուն պիտի հզօրապէս ջանայ մղում ու մարմին տալ երիտասարդ-թուրքիոյ հոսանքը Տաճկաստանի վարչային կազմակերպութեան մէջ, Սուլթան Համիտի սատակումէն անմիջապէս ետքը: Այդ գրութիւնը, ինչպէս արդէն բացատրուած է արտասահմանի մամուլին մէջ, նոյնքան կործանաբար է հայութեան համար որքան համիտեան գր-ժողիային մեքենան, որուն մէջ տասը տարիէ ի վեր կտորտուելու վրայ ենք:

Քանի մը տարի տուով, երբոր հայ յեղափոխական մարմինները բացէրաց կը պաշտպանուէին անդ-լիայի գիւտնագէտներէն՝ ընտրա-

կան հնարքի մը նպատակովը, և գաղտնապէս ապստամբութեան կը մղուէին Ռուսիոյ կողմէ, թուրքիան ձանձրացնելու, սկարացնելու և վարկաբեկելու դիտումով, հայկա-կան պահանջկոտութիւնները չափ ու սահման չունէին: Մէկ քանի սահմանակից նահանգներով ընդար-ձակուած Հայաստանի թագաւորու-թիւն մը մասամբ միայն կիրակա-նացնէր այս թըքատեաց հերձուա-ծողներուն երազները:

Ով որ գէթ լայն ինքնօրինութիւն մը չէր ընդունէր, բնաւ վարկ չէր գանար անոնց մտա: Հերուան այս ձիւներէն մէկ քանի աղմուտ հասիկ-ներ միայն կը մնան: Անշուշտ ու-րիշներ ալ պիտի տեղան — խօս-քերնիս ձիւնի վրայ է — մեր եր-կիրը պատու թուխ պամպը չպիտի անհետի ցորչափ տեւեն նստուա-լու թեան սկարութիւնը, խուժա-րարներու փառասիրութիւնը և Տէ-րութեանց ցանկութիւնները: Բայց, մէկ կտորածէն միւսը, համեմա-տապէս հանդարտ շրջան մը կայ երբեմն:

Սակայն հանդարտութիւնը ընդհանրապէս հաճելի չի գտար պզտորջուրի մէջ որսացողներուն : Ուստի այդ թուականին ամէն տարի երկիւղալի հեռագիրներ կողողէին եւրոպական մասնուր : Ուէտամինիսթրի դուքսը և իր բարեկամները այս գրգռիչ միջոցին կը դիմէին քանի մը անգլիացի կրօնամոնէրու քսակը բունալու համար ի նպաստ քրիստոնեայ հայերու, « մարտիրոսները իսլամական մոլեռանդութեան » : Հանգարտ ժամանակները բնաւ նպաստաւոր չեն քաղաքական - կրօնական եղբայրակցութեան այս ցոյցերուն : Երբոր խռովարարները որ թելը ձեռուքին ունին — խամաճիկներուն թելը — այն վիճակին հասնին որ իբրեւ միջոց օսմանցի հայերուն լուսման ունենան միայն, ձայներն կը կարի . ինքզինքնին պարտաւոր կը զգան իրենց պահանջումները հիւններու քիչ չափ օրինաւոր գեանի մը վրայ, այսինքն Պէրլինի գաշնագրին Յլրորդ յօդուածին զուտ և պարզ գործադրութեանը :

Խաղաղութեան համաժողովին մէջ Պէրլինի այս գաշնագրին վրայ միայն ինքիւր եզաւ : Դատին մէկ քանի խանգավառ պաշտպանները այսօր կը խօսին բարենորոգմանց այն ծրարագրին վրայ զոր Պոլսոյ գեոպանները Դրան ներկայացուցին 1895ին Առմէնիի սնօրէնը, մեր պաշտօնակիցն ու բարեկամը (*), կը հարցնէ

(*) Իր տաճիկ բարեկամն ինքը տեսնայ :

մեզի թէ միութեան մը պարագային մենք պիտի ընդունէինք այս երկու գիւանագիտական կարգադրութիւնները :

Մեր ծրագիրը, կարուկ ու սրտչ, բաւականապէս կը պատասխանէ առաջին կէտին . « գաշնագրերու յարգանքը » հոն կերեւայ մերկապարանոց : Պերլինի գաշնագրին Յլրորդ յօդուածովը օսմ . կառավարութիւնը « յանձն կառնէ անյապաղ գործադրել բարենորոգումները զոչս կը պահանջեն տեղական պէաքերը՝ հայաբնակ գաւառներուն մէջ » : կը յարգենք այդ յօդուածը, քանի որ յանձնառութիւն մը կը ներկայացնէ . նոյն իսկ բացէքաց անոր գործադրութիւնը կը պահանջենք, վասն զի, ինչպէս ըսինք, անիկա կը համապատասխանէ մեր իսկ պահանջներուն : Մենք ընդհանուր բարենորոգումներ կուզենք համօրէն կայսրութեան համար, յիշեալ յօդուածը միմիայն հայաբնակ գաւառներուն համար կը պահանջէ զանոնք : Սակայն ասիկա ալ ճիշտ միեւնոյն բանն է . վասն զի թուրքիոյ մէջ չիկայ նահանգ մը, քողաք մը ուր հայ բնակիչ չդանուի, թէպէտև միշտ ու ամէնուրեք փոքրամասնութիւն կազմելով : Չեւի տարբերութիւն մը միայն կայ գաշնագրին այս յօդուածին ու մեր ծրագրին խմբագրութեանը մէջ, ուրիշ ոչինչ : Մենք որ այս գաշնագիրը թելագրեցին Դրան՝ քողաքա-

կան թագուն խորհուրդ մը ունէ՛ին, ներշնչուած կողմնակցութեան ու կրօնական մոլեռանդութեան ոգիէ մը : Հնարաւոր է ասիկա , բայց ակնբերել կերպով աչքի չի զարներ . Եւրոպիոյ պատուոյն համար իսկ , մենք պէտք չէ որ ջանանք զանկա երեւան հանելու :

Գարով 1895ի յիշատակագրին , իսկապէս աճապարանքով պատուատուած ծրագիր մըն է , հայկական կոտորածներուն ատենը , քաղաքակիրթ աշխարհին գերագրգռութիւնը հանդարտեցնելու համար :

Այս ծրագրին առաջին հատուածը կըսէ թէ « կուսակալներու անուանումը պիտի ենթարկուի անբութեանց հաւանութեանը » :

Այս եզակի գլուխ-գործոցը շինող գեապանները թուի թէ ջանացած են այս ինքնակոչ բարենորոգումները ներմուծել այնքան հայերուն համար մասնաւորապէս և թուրք ժողովրդեան համար ընդհանրապէս , որքան իրենց սեպհական շահուն համար , և ասիկա՛ իրենց ազդեցութեան ու իրենց միջամտութեան սահմանները ընդլայնելու ոչ գովելի նպատակով : Սուրբ թանը խնդաց իրենց լրբութեանը վրայ և ասէ՛կ ըրաւ : Տէրութեան մը բարենորոգմանց ծրագիր չի ներկայացուիր , երբ անոր նպատակն է հարուածել իր իրաւունքներն ու իր անկախութիւնը :

Ամէն օտմանցի հայ որ կը մտածէ

ոչ թէ իր անձին անմիջական շահերը և այն պաշտօնը զոր կը յուսայ ձեռք բերել կարծեցեալ թագաւորութեան մէջ կամ՝ տէրութեանց կողմէ կարգուելիք կուսակալին քովը , այլ իր ազգին ապագան , այն անհատնում առանձնաշնորհումները զորս կը վայելէ թուրքիոյ մէջ և որոնք բոլորովին անծանօթ են իր ունի ազգակիցներուն , պարտաւոր է մերժել բարենորոգմանց ծրագիր մը որ ուրիշ բան չէ եթէ ոչ յառաջխաղացում մը գէպ ի օտարներու միջամտութիւնը , բան մը որ ապագային կ'սպառնայ մինչև իսկ իր ազգայնութեան գոյութեանը : Արդարեւ ո՛վ պիտի կրնայ իրեն ապահովել թէ անգամ մը որ հայամուրթիւնը անցնի երթայ , քաղաքական-եւմտական շահերը չը պիտի մղեն տէրութիւնները քիւրս և արար կուսակալներ ընտրելու՝ յատկապէս նոր յատագծի մը գործադրութեանը համար :

Եթէ արատասահման ապաստանող քանի մը հայերը և եթէ նոյն իսկ բոլոր հայերը վերահասու չըլլան այս վտանգին , պիտի ցաւինք իրենց համար : Որովհետև ինդիքը հաւաքական կեանքը պահպանելու և բարեփոխելու վրայ է , ո և է ազգութեան մը աննշան մէկ մտաք չի կրնար իւրացնել կայսրութեան բոլոր բնակիչներուն ճակատագիրը վարելու իրաւունքը :

Հայ , յոյն , թուրք , արար , սը

պանիացի, ամէնքս ալ բարենորոգում կուզենք: Ուրեմն սկսինք անոնցմէ որ անմիջականապէս իրականալի են ու բացարձակօրէն անհրաժեշտ այժմեան կեանքին: Այս բարենորոգումները չեն կրնար և պէտք չէ որ ուրիշ բան ըլլան եթէ ոչ կայսրութեան մնայուն օրէնքներուն անկեղծ գործադրութիւնը իսոր հրդարանի մը քննութիւն տակ (*): Երբ զանազան ազգերու ներկայացուցիչները հաւաքուին մեծ ժողովի մը մէջ, մենէ աւելի լաւ և մանաւանդ օտար գեսպաններէն լաւ պիտի գիտնան թէ ի՞նչ են մեր օրէնսդրութեան մէջ հարկաւորապէս ներմուծելի բարեփոխութիւններն ու փոխախթութիւնները:

Աւասիկ ճշմարիտ գետինը օրինաւոր քաղաքականութեան մը ուրուն վրայ պարաքի զգացումէն ու գեւորուած հայրենասէրները պարտին միանալ, ոչ թէ ընտանեկան կռիւներ յարուցանելու գէշ ընտրուած վայրկենի մը, ոչ թէ յարատեւելու կուսակցութիւններու բազմազանակ քմահաճոյքները, որոնք արդէն այնքան սուղի նստան Հայրենիքին, այլ յաղթող հանդիսացնելու համար մեծ դատը քաղաքակրթութեան որ իբրև հիմ ունի բարեկարգութիւնն ու սուսջգիմութիւնը:

(*) Տեսուր ու դամբանական օր, յորում հայրութեան կեանքին վերջնական փճացումը պիտի վճարուի:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՍԸ

Յ. Ճանկիւլիւսն տեղական թերթի մը մէջ ինծի պատասխանած ատենը, հիմնական սխալ մը կը գործէ ենթադրելով որ 45 թիւ Շարժումն մէջ Շ. ստորագրութեամբ յօդուածին հեղինակը ես եմ: Բացարձակապէս կը սխալի: Այդ յօդուածին հեղինակն է Շաւառպ, որուն բուն անունը հոս յայտնել իմ գործս չէ: Արդէն այդ յօդուածին ոճէն կարելի է հասկնալ թէ անոր հեղինակը ես չեմ ու չեմ կըրնար ըլլալ, մանաւանդ որ յօդուածագիրը « ընկերս » կոչած է Ճանկիւլեանը զոր ես հոս Վառնայի մէջ միայն ճանչցայ եւ որուն ընկերը ըլլալու պատիւը երբեք չեմ ունեցած: Սխալ է նաեւ թէ այդ յօդուածը Գիմակաւորներուն հրատարակումէն հինգ ամիս ետքը երեւցած է: Շաւառպի յօդուածը 1898 յուլիսին հրատարակուած է Շարժումն մէջ, իսկ Գիմակաւորները սոյն թերթին խմբագրութեանը հասած է հոկտեմբերին, որ ատեն արդէն երկու ամսէ ի վեր հրատարած էի Շարժումն խմբագրութիւնէն:

Անոնք որ այդ թերթին 98 ի հաւաքածոն ունին, բնականաբար շուտ մը կրնան ստուգել ըսածս:

Իսկ գալով խնդրոյ առարկայ անձին, չեմ գաղբիր անկեղծօրէն կարծիքս յայտնելէ անոր նկատմամբ: Գում-Գարուի գէպքին անմտանալի հերոսը կը շարունակեմ ճանչնալ յանձին Ճանկիւլեանի. բայց ինծի համար եւ անշուշտ բոլոր ողջամիտ մարդոց համար, գոյութիւն չունի Գիմակաւորներուն հեղինակ Ճանկիւլ-

եանը: Եթէ ինքը ու իր մարդիկը այս մասին համոզում չեն գոյացուցած, թող վերստին ուշադրութեամբ կարդան Գիմակաւորները, եւ պիտի համոզուին թէ որքան իրաւունք ունիմ իմ կարծիքիս մէջ: Այսքանը կը բաւէ:

Սակայն այդ Գիմակաւորները իր շահեկան պատմութիւնը ունի: Ճանկիւղեան Եգիպտոսէն Շարժումի խմբագրութեան ղրկած էր իր ձեռագիրը տպագրութեան համար: Գամեր-Արշաւիր ու ես, իբրեւ համակիրները հեղինակին, զոր պաշտպանած էինք իր անուանարկիչներուն դէմ, աչքէ անցուցինք ձեռագիրը եւ պժղալով անոր անպատշաճ մասերէն, զձեցինք զանանք՝ հեղինակին անունին, համբաւին եւ պատուոյն արատաւորման առաջքը առնելու համար եւ գրուեցաւ իրեն որ այդ յապաւուսներով միայն կարելի էր գրքոյիկը տպել: Ճանկիւղեան բացարձակապէս մերժեց: Մեր յորդորները բանի մը չէին ծառայած եւ ինք անշուշտ զարմացած էր թէ ի՛նչպէս Շարժումի հակառակորդներուն անձին դէմ իր յիշատակած ազոտտ պարագաները կը յապաւուէին նոյնինքն Շարժումի խմբագրութեան կողմէ:

Ու հրատարակուեցաւ Գիմակաւորները: Եւ Գամեր-Արշաւիր 68 թիւ Շարժումին մէջ զնահատեց զայն ինչպէս որ կը վայլէր պարկեշտ ու պատուաճանաչ գրողի մը:

Ու այդ օրէն Ճանկիւղեան ինքզինքը բարոյական անկման դատապարտեց:

Ահա թէ ինչո՞ւ համար այդ կերպով խօսած էի Գում-Գարուի նախկին հերոսի մասին Շարժումի մէջ:

Ե. ՍՐՄԱՔԷՇԻԱՆԻ, ԵԱՆ

Վերոգրեալ բացատրութիւնը դեռ հրապարակ չելած Ճանկիւղեանի ար-

բանեակներէն ոմանք Մ. Պարթեւ անձանօթ ստորագրութեամբ սպառնական նամակ մը ղրկած են ինձ որով կը հրամայեն (3) հրապարակաւ ետ առնել ինչ զոպարտութիւն (2) որ ըրած եմ Ճանկիւղեանի մասին Շարժումի նախորդ թիւին մէջ:

Աւելորդ է ըսել թէ՛ այդ կարգի սպառնալիք մը որ ծեծ եւ մինչեւ իսկ մահ կը վճռէ, զիս ո՛րքան անտարբեր կը թողու եւ ի՛նչ մեծ արհամարհանք մը կրնամ ունենալ մութին մէջ յոխորտացող բայց լոյսէն խրտչող այդ նամակագիրներուն նկատմամբ:

Միայն զարմանալին այն է որ Տօքթօր Շաքարեան ի ներկայութեան նոյն իսկ Ճանկիւղեանի եւ իմ մէկ բարեկամիս՝ Տ. Յարութիւն Խաչիկեանի, հրճուած է այս սպառնադրին լուրը առնելով եւ յայտարարած է որ « պէտք է գործադրել այդ սպառնալիքը »:

Ուրեմն մութին մէջ ինձ դէմ դաւադրներուն հետքը յայտնի է եւ ի հարկին կարելի է օգտուել անկից:

ՆՈՅՆ

ԶՂԱԳԱՐՈՒԹԻՒՆ

Կրկձեցուցիչ, անդարմանելի և սարսուղագեցիկ հիւանդութիւն մըն է շղագարութիւնը:

Անկից վարակուողը, անոր ճիւրաններուն մէջ պրկուողը անդգայ, արգահատելի և երբեմն անդգամ իսկ կըլլայ:

Առաջները կը կարծուէր թէ ազնուականներու յատուկ ախտ մըն է ասիկա, որ անդործութենէ, վայրկենական յուզումներէ, ցոփ կեանքէ և առողջապահական կանոններու զանցառութենէն առաջ կուգայ, սակայն այսօր հաստատուած է որ մարդկութեան էն ստորին դասակարգին մէջն ալ այնքան կը գտնուի որքան հայ-ղաճին մէջ:

Ըսուած է նաեւ թէ ջղագարութիւնը միայն կանացի հիւանդութիւն մըն է և կը գոյանայ նստուղական կեանքի մէջ զանազան պատճառներէ. բայց ջլխտարանները կը պնդեն որ կիներէն աւելի էրիկ մարդիկ են թակայ են անոր և նոյն իսկ պատճառներ կան, կըսեն, կարծելու թէ միայն արական սեռն է որ կուեննայ ջղագարութիւնը, մինչդեռ կիներունը լոկ ֆմահաճոյքի արդիւնք է, քարտիսի մը որ նմանապէս ջղային դրութեան կեդրոնէն ծագում կառնէ:

Ինչ որ ալ ըլլայ, իրողութիւնը սա է թէ՛ կայ այդ հիւանդութիւնը և անկից վարակուողները մէկէ աւելի են:

Բազմաթիւ օրինակներ տալ հարկ չենք տեսներ. մէկ հատը կը բուէ: Պօլիս, Քատը-գիւղի մէջ ծնած տղայ մը, իր ընտանիքին յոյսերէն մին, հարաւային հովին ազդեցութենէն ներգործուած օր մը վրդովեցուցիչ նշաններ յոյց կուտայ. ծնողքը կարծելով թէ պատճառը դատտիա-

րակութեան պակասն է, զինքը տեղւոյն վարժարանը կը դնեն ուր փայլուն աշակերտ մը չըլլալէ զատ կ'սկսի իր վրայ եղած կասկածները արդարացնելու փութալ, մարդասպանութեան փոքրիկ փորձերու նախատօնակը կատարելով: Բողոքներ կըլլան, ծնողքները զիմումներ կընեն և հողարարձութիւնը վերջապէս դուռը կը դնէ այդ տղան որուն սնակութիւն եղած էր գրիչը իր ընկերներուն փորը խոթել:

Անշուշտ ապագայ գործունէութեան մը նախերեւոյթն էր այդ դէպքը, որուն սակայն ուշագրութիւն դարձնող չեղաւ, վասն զի ոչ ոք կրնար մտածել թէ տարիներ ետքը, այդ վտանգաւոր տղան յիմարանոց չպիտի դրուէր և պիտի թոյլատրուէր որ անորակելի յանգրգնութիւնով մը փորձէր կրկին դրիչը ձեռք առնել և վիրաւորել ուրիշներ որոնց յաջողութիւնը անշուշտ զինքը կուրցուցած էին:

Վարժարանէն արտաքսուած այդ տղան փողոցները մնացած, օրերով աստ ու անդ սըքտացած էր և ամէն օր մէյմէկ վտանգ բերելով ծնողացը գլխուն, վերջապէս դէպքերը զինքը օտար հողի մը վրայ նետած էին:

Հոն թէեւ ի սկզբան նոր միջավայրի ցնցումը զգացած և որոշած է խելօքնալ ու մարդ ըլլալ, սակայն չէ յաջողած: Բնութիւնը զինքը գրգած էր դէպի անդունդը դիմել

և օր մըն ալ իյնալով առողիկի մը գիրկը, ոտացած էր գարշելի ախտ մը և անկից յետոյ . . . ալ այդ գժբախտ տղան խելքը գլխէն բուրովին դացած էր: Ի զուր աշխատած էր այդ վտանգաւոր և ուղեղին հետ զօրաւոր կապիւր ունեցող հիւանդութեան աւերումներէն ազատիլ. ապարգիւն եղած էր ամէն միջոց, այնպէս որ վրան արգահատողները զինքը թափթփած ծըրարի մը նման յանձնած էին Քրոկոթեան Բանակի պաշտօնեաներուն որ ապուրով և պատառ մը հացով քովերնին պոճեն. բայց անոնք հեռացուցած էին զայն իրենց քովէն ու խրկած՝ ջրէն անդին, օտար աստղի մը ներքեւ, ուր ազնաւի ճայներուն հետ խառնելով նաեւ իր ճայնը, ժամանակ մը կոկուացած և յետոյ կրկին նետուած էր, գրեթէ բռնի, իր վաղեմի հրապարակներուն վրայ:

Սակայն բժշկուած չէր խեղճ արզան. ընդհակառակը, հիւանդութիւնը ա՛լ աւելի աստկացած ու աստկացուցած էր իր ուղեղին խնդարումը ու ոչ ոք մտածած էր այդ եղկելին բժշկի մը խրկել, մինչեւ օր օր մը հմայիչ ճարակներ կողմերը երթալով կը կարծէ կէտիֆուլէի շրջակաները գտնուած ըլլալ, իմարապետին ձեռքի խարազանը սետած ու լսած ըլլալ անոր շաչիւնը ու կերեւակայէ հարուածներ ընդունիլ իր մարմնոյն վրայ՝ զայն կա-

պուտցնելու աստիճան. այնքան որ այդ քրէն սկսեալ ամէն ինչ խանգարուած կը մնայ խեղճ տղան էութեան մէջ, խարազան միայն կը տեսնայ շուրջը, ամէն բանի մէջ խարազանի համը կառնէ, աչքը կը դառնայ, հաւատարակչութիւնը կը կորսնցնէ և ուշակորոյս կը գլորի ցեխին մէջ ուսկից ոչ ոք կուզէ զինքը դուրս քաշել: Համարարանի մը դռնապանները կը վերցնեն և կը տանին զայն Ռէյմոնի սէռվիտը:

Ահա ջղագարութեան պարագայ մը որ ոչ ազնուականութեան, ոչ անգործութեան, ոչ չափազանց խելացութեան և ոչ ալ վայրկենական յազումի արգիւնք է, այլ ճակատագրային և congenital դատապարտութիւն մը որուն միանալով կարգ մը երկրորդական պատճառներ ինչպէս նախանձի դալարումներ, յոփ կեանք մը և կատարեալ բայց աստիճանաբար առաջ գացած dégenérescence մը կորսնցնել տուած են ուղեղի հաւատարակչութիւնը և թերեւս օգտակար կեանք մը փճացուցած:

Որքան գիտունները թող չպնդեն թէ ջղագարութիւնը անպատճառ արտաքին պատճառներէ առաջ կուգայ կամ ազնուականներու յատուկ է, երբ կրնանք ամէն դատապարգի մէջ գտնալ զայն, մանաւանդ որ ուղեղի բջիջները դատապարգի և սեռի հետ կապ չունին, բայց կազգեն բարոյականին վրայ

զոր պժգալի կընեն, հոգին կապա-
կանեն և ամէն զգացում կոչնչացնեն.
և այսպէս մարդը ողջ ողջ գերեզ-
ման կը տանին :

ԽՍ.ԲՈՅԿ



ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

(ՏՍ.ՃԿԱՐՆՍՍԿ ԳԻՒՂԻ ՄԸ ՄԷՁ)

Դեկտեմբերի դժնեայ ձմեռը իր
բոլոր խստութեամբ տիրած էր ար-
դէն երբ պաշտօնական նամակ մը ստա-
ցայ անմիջապէս մեկնելու զէպի պաշ-
տօնատեղիս, քաղաքէն ճիշդ 30 քի-
լոմէթր հեռու, փոքրիկ, աղքատ
տաճկական գիւղ մը :

Վերջերս նոր հրատարակուած օ-
րէնքի մը համաձայն 1900 դեկտեմբեր
31 ի գիշերը ընդհանուր մարդահամար
պիտի կատարուէր ամբողջ երկրին
մէջ միաժամանակ. և այս նպատակին
համար նշանակուած էին կառավարա-
կան գրեթէ բոլոր պաշտօնեաները :

Թէև շաբաթէ մը ի վեր մեծ առա-
տու թեամբ տեղացող ձիւնը անհնարին
դարձուցած էր կառքով ճամբորդելը,
սակայն գործը անհրաժեշտ ըլլալուն
առատ պարգև խոստացայ տաքզը-
լուի կառապանի մը և ճամբայ ե-
լանք :

Սաստիկ փոթորիկ և սառեցնող
ցուրտ մը :

Քաղաքէն հազիւ 5 կամ 6 քիլոմէթր
հեռացած էինք և ձիւնը—դեռ նոր սե-
ղացած ըլլալուն համար շատ փափուկ—
սկսաւ այնչափ շատնալ որ կառքին ա-

նիւները և ձիւնը մինչև իրենց կէ-
սը ձիւնի կոյտերուն մէջ կը թաղ-
ուէին :

Անկարելի էր ճամբան շարունակել.
ու ետ դարձանք :

Կառապանը վստահեցուց զիս որ՝
այս տեսակ պարագաներու մէջ՝ մօ-
տակայ գիւղացիները իրենց բոլոր
գումէշները դուրս հանելով, ձիւնը
կոխկոտել կուտան և ճամբաները կը
բանան :

Հարկ եղաւ մէկ երկու օր ևս ըս-
պասել :

Բայց ձիւնը կը շարունակէր սե-
ղալ առատ և փոթորիկը մոնչող,
կատաղի թափով մը ձիւնակոյտեր կը
գիղէր ամէնուրեք : Իսկ ես ստիպուած
էի անպատճառ հետեւեալ օրը պաշտօ-
նավայրս գտնուիլ :

Քաղաքին հիւանդանոցը բերուած
էին մնացորդները մարդկային դիակի
մը, որ գայլերու կեր եղած էր :

Մտակայ գիւղէ մը 7 հոգի փայտի
համար անտառը գացած ու հոն սա-
ռած ըլլալով՝ իրենց դիակները գիւղը
տարուած էին :

Եւ երեւակայել որ այդ պայման-
ներուն մէջ ես պարտաւորուած էի 30
քիլոմէթր տեղ քալել ոտքով :

Ճամբաները չէի ճանչնար : Ու
պէտքը կար փորձառու առաջնորդի մը :

Արնալուս էմինը, յաղթանդամ
և ևուժկու, գրեթէ իր ամբողջ կեանքը
ճամբորդութիւններով անցուցած հին
աղուէս մըն էր : Ծիշդ իմ ուղած
մարդս :

— Երկնքէն կրակ ալ տեղալու ըլ-
լայ, քեզի տեղդ կը հասցնեմ, ըսաւ
էմինը ինքնավստահօրէն :

Հետեւեալ առտու կանուխ ես և
առաջնորդս, սպառազինուած, ճամբայ
ելանք զէպ ի գիւղ :

Թէեւ ցուրտը իր գագաթնակէտին հասած, բայց փոթորիկը համեմատաբար աւելի մեղմացած էր: Չիւնի անհամար հատիկներ, սպիտակ թիթեռներու նման, օդին մէջ կը թռչկոտէին խուռներամ: Թերեւս ըսէի թէ հաճոյալի ճանապարհորդութիւն մըն էր ասիկա, եթէ ձիւնակոյտի մը մէջ խրուելու, ցրտին սաստկութիւնէն ստոկու կամ սոլալուկ գայլերու վոհմակէ մը յօշոտուելու վտանգները չըլլային:

— Եթէ երբէք գայլերու խուռ մը նշմարուի, քու առաջին գործդ պիտի ըլլայ իսկոյն մտակայ ծառի մը վըրայ ելլել, հրամայեց ինծի առաջնորդ էմինը, որ ոտքերուն հագած օրբիւններով, գլխի անագին փաթտոցով, մէջքի գօտիին խրած « եաթաղան » ներով, դաշտայններով եւ թրքական « տապանճա » ներով անարկու աւազակի մը տեսքը ունէր: Եւ ես պահ մը վարանեցայ թէ գայլերու արշաւանքէ՞ մը աւելի վախնալու էր, թէ աս խաժ աչուըններով, իխտ գիմագծերով, դաժան ալպանացիի ներկայութիւնէն:

Ու ակամայ, գրեթէ մեքենաբար, ձեռքերս գրպաններս տարի, ստորճանակներուս գոյութիւնը ստուգելու համար:

— Հո՞ն են, ըսաւ խորամանկ էմինը ժպտելով:

* * *

Այս կողմերը, ձմեռ ժամանակ մանաւանդ, կատաղի, սառեցնող փոթորիկներ սովորական էին: Չիւնը բոլոր բլրակներուն եւ բարձրաւանդակներուն վրայէն աւլուած, ու ձորերու մէջ, ճանապարհին ցած տեղուանքը գիզուած էր:

Ճամբուն երկայնութիւնովը, երբեմն, երկու կողմի հսկայ ծառերը ձիւներու մէջ կորսուած էին գրեթէ: Նոյն իսկ տեսանք անտառներ, որ ձիւնի անագին զէզերու մէջ կիսովին թաղուած՝ մացառուտ բլրակներու տեսքը ունէին:

Էմին առջեւէն եւ ես ետեւէն լռիկ մնջիկ կը քալէինք հիմա, երբեմն մինչեւ կէս մէջքերնիս ձիւնաթաթախ:

Բարեբախտաբար էմինը այդ կողմի բոլոր ճամբաները իր ձեռքի հինգ մատներուն պէս ճանչնալով, ազատած էինք ձիւնի կոյտերուն տակ պահուած փոսի մը մէջ խեղդամահ ըլլալէ: Ու ես սրտի ներքին գոհունակութեամբ մը տեսայ թէ էմինը իր կոշտ պատեանին տակ բարի եւ փափուկ սիրտ մը ունէր:

Իր յաղթ եւ ծանր մարմինը ձիւներուն վրայ տարածելով եւ գրեթէ սողալով դիւրամտաչելի ճամբաներ կը բանար, երբեմն եռանդով ու հիացումով լեցուն հէքեթներ պատմելով, այդ դժնդակ ճանապարհորդութեան յոգնութիւնները ամօքելու եւ ուժ ու քաջասրտութիւն ներշնչելու համար ինծի: Մէկ քանի անգամներ վերջին աստիճան յոգնած վիճակի մէջ փափաք յայանեցի քչիկ մը նստիլ յոգնութիւն առնելու համար:

— Ամենեւին, ըսաւ էմին, նստելուդ պէս կը պաղիս:

Ամբողջ եօթը ժամ անընդհատ քալելէ, ցուրտին, փոթորիկին եւ ձիւնի զէզերուն դէմ յուսահատական կռիւներ մղելէ ետքը անտառուտ բլրակի մը վրայ հասանք:

— Կը անտեսնո՞ս սո միւս բլուրին ստորոտը գանուող փոքրիկ գիւղը, ըսաւ էմին, Հէյրան-Քէօյն է անիկա, մեր երթալիք տեղը, ուր պիտի հասնինք սո առաւելն կէս ժամէն:

Ու եւ զգացի ան ուրախութիւնս-
ներէն մէկը, զոր մարդ՝ իր ամբողջ
կեանքին մէջ՝ մէկ կամ երկու անգամ
միայն կ'զգայ:

*
* *

Գիւղին կեդրոնը, բաւական ըն-
դարձակ հրապարակի մը վրայ միա-
յարկ, քարաշէն, փոքրիկ փեղկա-
ւոր պատուհաններով քառակուսի
շէնք մը կարեւ անոր կից ուրիշ փայ-
տաշէն փոքրիկ սենեակ մը: Գիւղին
մզկիթն ու վարժարանն էին ասոնք:

Առանց վարանու մի մտենալով՝
էմին զպրոցին գուռը ետ հրեց:

Դրան դիմացի կողմը պատին մէջ
շինուած կամարի մը ներքեւ չոր
փայտերու դէզ մը կը վառէր ճարձա-
տու մով, ախորժիկի տաքութիւն մը
սփռելով սենեկին մէջ:

Կրակարանին աջ կողմը, մերկ
խտիրին վրայ, երկայն «խրքայով»
կանանչ փաթտոցով, սպիտակ, փա-
ռահեղ մօրուքով, պատկառելի ծե-
րուկ մը նստած էր ծալապատիկ: Հօ-
ճային դիմացը 12-13 տարեկան աղ-
ջիկ մը, ծնրագիր, առջեւը նստարանի
ձեւով տախտակի մը վրայ գրուած
գրքոյկը եղանակաւոր ձայնով կը
կարդար օրօրուելով շարունակ:

Աջ ու ձախ՝ երկու պատերու եր-
կայնութեամբ գետնէն հազիւ 25-30
սանդիմէթր բարձր՝ տախտակներ կեր-
կըննային անտաշ փայտէ ոտքերով:
Եւ այդ գրասեղաններուն (2) շուրջը,
մէկ կողմը 10 ի չափ մանչ եւ միւս
կողմը նոյնչափ աղջիկներ, 8-10 տա-
րեկան, նոյնպէս մերկ խտիրին վրայ
իրենց գրքոյկներուն առջեւ ծունկ
չոքած օրօրուելով բարձրաձայն կը
կարդային՝ ամէն մէկն իր եղանակով:
Եւ որպէս զի ունեցած ըլլաք գիւ-

ղական տաճիկ զպրոցի մը ամբողջ
նկարագրութիւնը, երևակայեցէ՛ք
այս բոլորին հետ նաեւ կրակարանին
կամարին վրայ գրուած թիթեղեայ
լամպար մը, հօճային ճիշդ գլխուն
վերեւ, առաստաղէն վար կախուած
քարիւղի շիշ մը, դրան ետին սեւցած,
կոտրած հին սափոր մը եւ հօճային
ճիշտ քովիկը, պատին կրթնած հաստ
ու երկայն երկու դաւազաններ, ու-
րոնցմով հարկ եղած աստին պատկա-
ռելի ուսուցիչը, առանց սեղէն շար-
ժելու, սենեկին մէկ ծայրէն միւսը
կրնար հասնիլ, պատկերու համար այն
«ծոյլ» աշակերտները, որոնք համար-
ձակած էին աշքերնին գրքոյկին վրա-
շէն վերցնելու եւ օրօրուելէ դադարելու:

Երբ մանք ներս մտանք՝ հօճան իր
աշակերտուհին հետացուց իր առջեւէն:

— Տեղդ գնա՛, ըսաւ խիտտ ձայ-
նով մը, եւ ձեռքը առջեւի տախտա-
կին զարնելով՝ գրեթէ հայրական գո-
րովով մը աւելցուց:

— Օ՛ն, զաւակներս, ցրուի՛նք:

Վանդակի մը մէջ երկար աստին
փակուած եւ այժմ՝ ազատ թողուած
ճնճղուկներու երամի մը պէս, երկվայր-
կենի մը մէջ, դռնէն դուրս թռան բո-
լոր աշակերտներն ու աշակերտուհի-
ները, մանկական ուրախ ու հետա-
քըրքիբ ակնարկներ ձգելով «էֆէն-
տիին» եւ անոր զինուած ուղեկցին
վրայ:

Պէտք է աւելցնել նաեւ թէ այդ
վարժարանին մէջ դիտելու ո՛չ սակաւ
արժանի ուրիշ կէտ մըն ալ կար: Ամ-
բողջ վարժարանին մէջ գիր գրելու
ո եւ է նիւթ չտեսայ. թուղթի, գրչի,
մնլանի հետքերն անգամ չկային հոն:

— Դուք ձեր աշակերտներուն գրել
չէ՞ք սորվեցներ, հարցուցի հօճային,
չկրնալով զոպիւ զարմանքս:

Ներողամիտ ժպիտ մը երեւցաւ արեհեր ծերուկին գէմքին վրայ :

— Պա՛հ, ըսաւ, ի՞նչպէս կարելի է 12-13 տարեկան աղու մը թէ՛ կարգալ եւ թէ՛ գրել սորվեցնել :

— Բայց, ըսի, ի՞նչպէս կը սորվեցընեն մեր վարժարաններուն մէջ :

— Ձեր վարժարանները ուրիշ՝ մեր լեզուն ուրիշ, պատասխանեց կորուկ կերպով հօճան :

Հասկցայ որ անօգուտ էր ո եւ է «մանկավարժական» վիճաբանութիւն, մանաւանդ որ իմ պաշտօնս բոլորովին տարբեր հանգամանք ունէր :

Նոյն միջոցին ներս մտաւ գիւղապետը :

Երկար բարակ ճառ մը կարդալ պէտք եղաւ հասկցնելու համար ըսպիտակամօրուս հօճային եւ միամիտ գիւղապետին թէ ի՞նչ էր իմ պաշտօնս, եւ թէ մանաւանդ ի՞նչ նպատակ ունէր կատարուելիք մարդահամարը : Ամբողջ պերճախօսութիւնս գործածեցի ցրուելու համար անոնց այն կասկածը թէ «նոր տուրքեր պիտի աւելցուէին արդէն այնքան ծանր տուրքերուն վրայ» :

Թրքական կեանքի եւ իրենց կըրօնական աւելորդապաշտութիւններուն քիչ շատ տեղեակ ըլլալով, գիտէի թէ՛ թուրքի մը համար աններելի նախատինք էր, երբ մէկը — մանաւանդ եթէ քրիստոնեայ ըլլար այդ մէկը — համարձակէր իրեն սա անմեղ հարցումը ուղղել :

— Կնոջդ անունը ի՞նչ է :

Իսկ մարդահամարի համար, աւելորդ է ըսել, անհրաժեշտ էին այս կարգի տեղեկութիւնները : Ես մասնաւորապէս խնդրեցի հօճայէն ու գիւղապետէն որ իրենց կողմէն այս մասին հարկ եղածը խօսին գիւղացիներուն,

որուն, ո եւ է թիւրիմացութեան տեղի չտալու համար :

Խալիլ հօճան իր մշտավառ «չիպուխը» կուշտ մը քաշելէն ու թանձր մուխը կուլ տալէն ետքը աղեկէզ հառաչանք մը արձակեց :

— Է՛հ, ըսաւ, մենք արդէն ըսկըսանք վարժուիլ այդ տեսակ բաներու :

Նոյնպէս ինչորեցի որ քանի մը օրուան համար իր աշակերտներուն արձակուրդ տալով գպրոցը իմ տրամադրութեանս տակ գնէ, քանի որ ամբողջ գիւղին մէջ գոնէ անոր չափ յարմար երկրորդ սենեակ մը չկար : Նոյնպէս համաձայնեցաւ :

Ու ես սկսայ գիւղին բոլոր տուները մէկիկ մէկիկ այցելելով՝ գիւղացիները հարցաքննել — կիները բնաւ չէին երեւար — եւ քաղած տեղեկութիւններս արձանագրել կարգաւ :

* * *

— Անունդ ի՞նչ է :

— Խալիլ հօճա :

— Քանի՞ տարեկան ես :

— Ութսուն ու երեք :

— Քանի՞ զաւակ ունիս :

Խալիլ հօճան ժպտեցաւ :

— Ես շատ զաւակներ ունիմ, ըսաւ, բայց անոնցմէ միայն վերջինը իմ քովս է : Միւսներէն ամէն մէկը իր առանձին տունը ունի. առանց հաշուելու աղջիկներէս ունեցած թոռներս, միայն իմ զաւակներուս, հարսերուս, թոռներուս եւ թոռնորդիներուս թիւը 44ի կը հասնի :

Եւ հիանալի հպարտութեամբ մը աւելցուց .

— Կուզե՞ս որ անոնց ամենուն ալ անունները մէկիկ մէկիկ ըսեմ քեզի :

— Տանտիրոջը անունը ի՞նչ է :

« Տանտիրոջը » կը նշանակէր « կը-
նոջդ » : Գիւղացիներուն ինքնասի-
բութիւնը չվիրաւորելու համար ըս-
տիպուած էի այս բառը գործածել :

Բայց գէշը այն էր որ Խալիլ հօ-
ճան, գիւղին միակ « ինտէլիկէնթ »
մարդը, իր « տանտիրոջը » անունը չէր
գիտեր :

Անպատմելի շուարումով մը երես
նայեցաւ :

— Իրա՛ւ որ, ըսաւ, չեմ գիտեր :

Ու հարկ եղաւ որ ներսը, իր կնո-
ջը քով մտնէ, հարցնէ եւ վերագառ-
նալով ինձ ըսէ .

— Էմինէ՛ :

Որպէս զի ընթերցողը չափէն աւե-
ջմեղադրէ Խալիլ հօճան՝ իր կնոջ ա-
նունը չգիտնալուն համար, պէտք է
անմիջապէս ըսեմ թէ ան, իր առա-
ջին կինը մեռնելէն վերջը, քանի մը
տարի առաջ, եօթանասուն եւ եօթը
տարեկան հասակին մէջ երկրորդ ան-
գամ ամուսնացած էր այրի Էմինէին
հետ :

Հոս տեղն է նաեւ աւելցնելու թէ,
թուրքերու մէջ տիրող կրօնական հա-
մոզմունքի մը համաձայն, իւրաքան-
չիւր հաւատացեալ մեռած ժամանակ
անպատճառ պէտք է ամուսնացած վի-
ճակի մէջ գտնուիլ, մեծ մարգարէին
խոստացած « ճէննէթը » ժողանդելու
իրաւունքը ունենալու համար :

*
* *

— Անունդ ի՞նչ է :

— Ֆէրհատ

— Տանտիրոջը անունը ի՞նչ է :

Ֆէրհատ՝ յօնքերը պոռտած, տը-
խուր, պաղատալից շեշտով մը՝

— Կաղաչեմ, էֆէնտի, տանտիրո-
ջը անունը չգրուի նէ չըլլա՞ր :

— Անկարելի է, Ֆէրհատ ահա :

Ու ես կ'ստիպուիմ, հարիւրե-
րորդ անգամը ըլլալով գուցէ, կրկնել
միշտ միեւնոյն բանը . « Մարգահամա-
րի օրէնքին . . . րդ յօդուածը կը տրա-
մադրէ թէ, ով որ կը մերժէ պահան-
ջուած տեղեկութիւնները սալ կամ
գիտակցաբար կը խեղաթիւրէ զա-
նոնք, 15 օր բանտարկութեան եւ 150
ֆր. տուգանքի կենթարկուի անխը-
տիր : »

Ֆէրհատ ահան օրինաց սպառնա-
նալիքին տակ ընկճուած՝ մեղմ ձայնով
մը կ'արտասանէ իր կնոջ անունը :

— Ֆաթի՛մէ

*
* *

— Անունդ ի՞նչ է :

— Օմար

— Քանի՞ զաւակ ունիս :

— Հինգ, չորսը մանչ՝ մէկը աղջիկ :

— Ձի ունի՞ս :

— Ո՛չ :

— Կո՞վ :

— Ո՛չ :

— Գոմէ՞ջ, է՞ջ :

— Ա՛յծ, ոչխա՞ր :

— Հա՛ւ, սա՞գ, բա՞գ

— Ո՛չ, ո՛չ, էֆէնտի, անանկ բա-
ներ չունիմ : Մի՛նակ թէ բան

— Ի՞նչ բան :

— Լուսահոգի հօրմէս ընտիր որոի
հրացան մը ժառանգած եմ, պիտի
ինդրէի որ ան ալ արձանագրէիք այդ
թուղթերուն մէջ :

— Հարկ չկայ, Օմար ահա :

— Բայց կաղաչեմ, էֆէնտի

Բարեբախտաբար բարեմիտ գիւ-
ղապետը օգնութեան կը հասնի ինձ
եւ բան գործ հասկցող մարդու մը
չեշտով կըսէ .

— Չըլլա՛ր, Օմա՛ր, էֆէնտին

« զակօնէն » դուրս չը կրնար ելլել :

Այդ թուղթերուն մէջ պիտի գրուին միայն մարդիկը, անասունները, ընտանի թռչունները եւ շէնքերը, այնպէս չէ՞, էֆէնտի:

— Այո՛, այո՛, շատ ճիշդ է:

Եւ Օմար ական կը մեկնի գլխիկոր:

— Օմարը լաւ մարդ է, կը յարէ գիւղապետը ինձ դառնալով, եւ շատ ճշտապահ, գիւղին «քէհեան» է, այսինքն՝ մուսնետիկը, ոտտիկանը, թըղթատարը, գիշերապահը, մզկիթին «լուսարարը», զպրոցին «տնաւոր»...

— Եւ ի՞նչ ոռճիկ կըստանայ այսչափ պաշտօններու համար:

— Գասրիւն մինչեւ խըթէլլեզ (հոկտեմբեր 26էն մինչեւ ապրիլ 23. գրեթէ վեց ամիս) հինգ հարիւր դրչ. արծաթ (100 ֆր.): Այո՛, աշխատատէր մարդ է

* *

— Մեծ աղանգ քանի՞ տարեկան է:

— Տասնըջորս:

— Ի՞նչ գործ կընէ:

— Գպրոց կերթայ:

— Գրել կարդալ գիտէ՞:

— Կարդալ գիտէ, բայց գրել չը գիտեր:

Եւ ես ստիպուած եմ գիւղին մէջ գտնուող «ուսանողներուն» թուղթերուն մէջ «կարդալ գրել գիտէ՞» հարցումին գիմացը գրել միշտ միեւնոյն պատասխանը. «ո՛չ» վասն զի մարդու համարի կանոնադրին տրամադրութեանը համաձայն այդ հարցումին «այո՛» պէտք էր պատասխանել միմիայն այն պարագային երբ արձանագրուողը գրել եւ կարդալ միանգամայն գիտէր:

* *

— Տունդ քանի՞ սենեակ ունի:

— Երեք:

— Քանի՞ կան պատուհան ունին:

— Սենեակներէն մէկը մէկ պատուհան միայն ունի, իսկ միւսները չունին:

— Պատուհանը ապակի՞ է, թուղթ, մո՞րթ. . .

— Թուղթ, էֆէնտի:

Ամբողջ գիւղին մէջ մէկ պատուհան միայն գտայ ապակիէ, ան ալ գիւղային դպրոցին երկու պատուհաններէն մէկը: Կար նաեւ ուրիշ պատուհան մը — գիւղապետին տան պատուհաններէն մէկը — որուն կէսը ապակի էր եւ կէսը թուղթ

* *

— Քանի՞ սենեակ ունիս:

— Մէկ:

— Հապա անասուններդ ո՞ւր կը պահես:

— Մեր ապրած սենեկին մէջ, էֆէնտի, մէկ կողմը մենք կը պահինք, մէկ կողմն ալ անոնք:

— Տանիքը ի՞նչով ծածկուած է, կղմի՞նտը, թիթե՞ղ, եղէ՞ղ, հո՞ղ . .

— Եղէղ, էֆէնտի

Գիւղական մզկիթէն զատ երկու տուն միայն կար կղմինտրով լծածկուած. մնացած բոլոր տուներուն տանիքները եղէղ կամ հող էին:

* *

— Անունդ ի՞նչ է:

— Մըսթան

— Քանի՞ դաւակ ունիս:

— Երեք, երկուքը մանչ, մէկը աղջիկ: Անկէ զատ

Մըսթան ական յայտնապէս վարանումի մէջ է:

— Ուրիշ ըսելի՞ք մը ունէիր:

— Խօսքս ամօթ չըլլայ, էֆէնտի,

. . . անեցիները յղի են . . . այսօր կամ վաղը աշխարհ պիտի գայ, անիկայ չը՞ պիտի գրէք:

«Տնեցիները» (տաճկ. էվ ուշագլարը) կը նշանակէ պարզապէս «կինս»:

— Առ այժմ պէտք չէ՞. բայց եթէ այս գիշեր մինչև 12 ծնի, եկէ՛ք լուր տուէք որ արձանագրեմ:

— Գլխուս վրայ, էֆէնտի, եւ Մըսթան ական շտապով կը մեկնի, դուցէ ստիպելու համար իր խեղճ յղի կինը, որ քիչ մը շուտ ընէ . . .

*
* *

Գիւղին մէջ այդ սրտմաշուկ պըտոյտը աւարտելէս ետքը՝ վերադարձայ սենեակս եւ հաշուեցի քաղած տեղեկութիւններուս արդիւնքը:

Ամբողջ գիւղը 20 տունէ բաղկացած էր եւ 121 բնակիչ ունէր, որոնց 60ը արական եւ 61ը իգական սեռէ:

— Ափսո՛ս, ըսի ինքնիբեհս, արական սեռը մէկով միայն տարուեցաւ . . .

Կէս գիշերը մօտեցած էր. գիւղական տաքուկ վարժարանին մէջ միս մինակ, սեղանիս առջև նստած, ժամացոյցիս ներդաշնակ «թիք-թաք»ները մտիկ ընելով եւ անոր սլաքներուն դանդաղ յառաջխաղացումը դիտելով կը պատրաստուէի նոր տարին, մաւանդ նոր դարը գիմաւորելու:

Հինգ չնչին վայրկեաններ միայն մնացած էին, որ հսկայ 10րդ դարը անցեալի անդունդին մէջ դլորէր . . .

Յանկարծ սենեկին դուռը ուժգնակի բացուեցաւ կրնկի վրայ եւ Մըսթան ական երեւցաւ վեհապանձօրէն:

— Ծնա՛ւ, պոսաց:

— Հա՛ . . . մա՛նչ թէ աղջիկ, շուտ ըսէ՛ . . .

— Մա՛նչ, մա՛նչ . . .

— Կեցցե՛ս, գոչեցի ես ալ Մըսթան ականին պէս ուրախանալով:

Հէյրան-քէօյին արական սեռը փըրկուած էր ուրեմն:

Ու խանդաղատանքով սեղմեցի անոր կոշտ ձեռքը:

*
* *

Մարդահամարէն երեք օր ետքը երբ արդէն վերադարձեր էի քաղաք, Մըսթան ականին մէկ ազգականէն իմացայ թէ՛ սղաքերքին հետեւեալ օրն իսկ՝ անուելի տանջանքներու գալարումներուն մէջ մեռած էր անոր թըշուառ կինը:

Ու մէջս — ինչ մեղքս պահեմ — սոսկալի կասկած մը ծնաւ. Մըսթան ական տգիտօրէն իր նոր երախան ալ արձանագրել տալու աճապարումին մէջ 20րդ դարու հետ միասին ծնող չարաբաստիկ սողուն իր խեղճ կինը զոհ տուած չէ՞ր արդեօք:

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ



ԴԱՍԱԼԻՔՆԵՐԸ



Աղդ մը լքելը, անոր պատկանելէ դագրիլը ամէնէն տխուր արարքներէն մէկն է մարդկային արարածին: Աղդի մը մասը կազմող այն անհատները որ՝ ներկայացած առաջին յարմար ու շահաբեր առթիւ, հրաժեշտի ողջոյնը կուտան իրենց լեզուին, կըրօնքին, պատմութեան, աւանդութեան, բարքերուն եւ սովորոյթներուն, ճակատավայրէն սալասմբակ

խոյս տուող զինուորի մը կը նմանին, որ՝ կաշին փրկելու տիրական բաղձանքէն խելայեղ, կոնակը կը դարձընէ իր զինակիցներուն որոնք հայրենիքի փրկութիւնը ու պատիւը պահպանելու համար արիւննին թափելու վրայ են անդին:

Այս նմանութիւնը մանաւանդ անոր համար աւելի կը պատշաճի մեր ազգէն անջատուողներուն, որովհետեւ ամբողջ հայութիւնը այս վայրկեանի կը ներկայացնէ տեսարանը թշնամիներէ պաշարուած բանակի մը, որ իր փրկութիւնը իր անվեհեր ու անընկճելի տոկունութեամբը պիտի կրնայ ապահովել:

Գուցէ մեր մէջ գտնուին նրբացածներ որ տաղակացուցիչ ու գռեհիկ նկատեն այն վարդապետական հովը, զոր հայ մամուլի ներկայացուցիչները երբեմն ակամայօրէն կ'ստիպուին առնել՝ զրելու համար այնպիսի նիւթերու վրայ, որոնց, իսկապէս, բուն եւ ճշմարիտ թարգմանները մեր ճերմակերեւ կրօնականները պէտք էին ըլլալ: Այսպէս մտածողներուն համար կարելի է մատնանիչ ընել թերթեր որոնց մէջ յիշ ու զուարթ բաներ միայն կը գրուին:

Այլասերուած հայերու հարցը հայ մամուլը զբաղեցնող անվերջ հարցերէն մէկը պիտի մնայ, մանաւանդ ասկէց ետքը, երբ ազգը՝ քանակութեան տեսակէտով՝ շատ վրդովեցուցիչ եւ շատ թանկագին հանդամանք մը ստացած է:

Ակապտիկներու եւ աշխարհաքաղաքացիներու համար, որոնց հետ բընաւ գործ չունինք եւ որոնց չենք ուղղեր անչուշտ մնը յորդորները, ազգ մը ձգել իրախիլը՝ խանութ մը գոցելու կամ պաշտօն մը ձգելու չափ

կարեւորութիւն իսկ չունի: Բայց անանկներ կան որ, ոչ սկեպտիկ մը ոչ աշխարհաքաղաքացի մը, ազգային դասաւըութիւնը կը կատարեն հետեւեալ առարկութեամբ, որ սկզբունքի մը չափ բանաւոր կերեւայ իրենց.

— Ի՞նչ կ'ըլլայ, թող մէկ հատ մը պակաս ըլլայ, ուրիշ դեռ չա՛տ հայեր...

Ու բոլորն ալ այս սգալի դամբանականը կը մըմնջեն ազգին համար կորսուող հայու մը բարոյական դիակին վրայ, ու շղթան կերկարի, յարածուն օղակաւորումով, լռիկ անշըշուկ, սառապող ազգին աղաղակներուն մէջ գողունի խուսափանքներէ կազմուած այս շղթային շառաչը խեղճուած դրեթէ:

*
* *

Դաստիարակուած երիտասարդ մը որ շատոնց Եւրոպա կը գտնուի, դասաւըութեան նոր պարագայ մը մատնանիչ կընէ մեզի: Այլասերութեան այս նոր ներկայացուցիչը նմանապէս երիտասարդ հայ մըն է, շրջանաւարտ մտպերթ Գոլէֆէն եւ աղէկ գիրքի տէր: Հրապուրուած է գերմանուհիի մը խարտեաչ... ոսկիներէն: Իր այս սոսկ պղատոնական յափշտակութեանը!! մէջ սիրուն հայը կ'ընդունի գերմանական հպատակութիւնը եւ կամուսնանայ բողոքական պահով: Իր զաւակները, աւելորդ է ըսել, Վիլհելմ Բ.ի ամէնէն կայսառ ու հաւատարիմ հպատակներէն պիտի ըլլան:

Բարեկամ մը հետեւեալ դիտողութիւնը ըրեր է իրեն.

— Թէեւ բնաւ ինքզինքիս չեմ ներքեր ուրիշի մը, նոյն իսկ բարեկամի մը անձնական գործերուն խտանուիլ, բայց իրրեւ անդամը գժբախտ ազգի

մը որ մեծամեծ կորուստներ տուած է, կը ցաւիմ որ քեզի պէս արժանաւոր անդամ մը եւ անոր ասպագայ յաջորդները կորսնցնելու ցաւալի վիճակին մէջ կը գտնուի:

Ասոր պատասխանը, անշուշտ կը կուսէք, յաւերժական բանաձեւը.

— Ի՞նչ կ'ըլլայ, թո՛ղ մէկ հատ մը պակաս ըլլայ եւայլն...

Նամակագիրը սիրտոցաւ ենթադրութիւն մը կ'աւելցնէ.

« Քսաներորդ դարուն մէջ, երբ հայրենիք, ազգութիւն, կրօնք, սէր խորհրդանշանական ձեւով մը ուզուի ցուցուիլ, կարծեմ շատ պարզ նշան մը պիտի գործածուի. բոլորակ մետաղ մը, որուն մէկ երեսը թագակիր գլուխ մը գտնուի եւ միւս երեսն ալ թուանշան մը, 20 կամ 10, սա՛մօւսով « ֆրանք, մարք, եւայլն »:

Եւ, չըլլալիք բան չիկայ զբամի թագաւորութեան այս անեղ ժամանակին մէջ:

* * *


Սակայն, անհատական գիտակից այլասերութեան եւ ամբողջ գաղութի մը, երկարամեայ ժամանակամիջոցի մը մէջ, անզգալիօրէն ձուլուելուն անհետանալուն մէջտեղ անագին տարբերութիւն կայ: Մէկուն մէջ հաշուով, երկարաշունչ մտածումով պատրաստուած դաւը կայ ազգային գոյութեան զէմ, ու ասով անհատական պատասխանատուութիւնը բնաւ մեղմացուցիչ ու արդարացուցիչ պարագայ չունի: Միւսը, դերազանցօրէն աւազելի հետեւանքներով, ժողովրդային զանգուածներու անշուշտ, անզգալի ու անանց կանխամտածութեան մաքսուումին եղբակացութիւնն է: Վերջին

երեւոյթը անհամար օրինակներով կը համրուի մարդկային պատմութեան մէջ: Երբոր Լեհաստանի, Հունգարիոյ, Ռումանիոյ հայ գաղթականութիւնները այսօր գոյութիւն չունին, ատոր մեղքը իրենց ճիտը չէ անշուշտ. տիրող տարբերուն ընկերային կազմակերպութեան անիւներուն ատամնագոյցին մէջ՝ առանց ուզելու՝ փրշուեր են: Զիրենք ասդին քաշող չէ եղեր: Վա՛յ անոնց որ, հեռուէն, անտարբեր հանդիսատեսներ եղեր են ցեղական այդ քստմնելի տարրալուծումին:

Բայց, սա Եւրոպա կեցող զարգացած երիտասարդը ինչով կրնայ արդարացնել իր դասալքութիւնը, ազգին երեսն ի վեր նետած լքումի արհամարհանքը: « Ի՞նչ կըլլայ, թող մէկ հատ մը պակաս ըլլայ » ի իր եղեռնական ապուշ փիլիսոփայութեամբը, որ եսասիրութեան ամէնէն հոյակապ արտայայտութիւնն է:

Արտասահմանի մէջ նոր հայ գաղթականութեան հատատուած թուականէն, 5-6 տարիէ ի վեր, հայ անհատներ կորսուեցան այսպէս, անհատական ու գիտակից նախաձեռնութեամբ, եւ ցաւալին հոն է որ ֆրանսուէին, անգլուէին, գերմանուէին եւ ուրիշներ հայ երիտասարդութեան էն select մասը կը բրցունեն կը տանին:

Ե. ՍՐՄՍՔԷՇԵՒԱՆԼԵԱՆ




Զէյթունցի. — Զեր նոմակը զըրկուեցաւ այդ գործով շահագրգռուող անձին:

Огосовриакъ В. Думитровъ, адоокато

Печатница « Ориенталъ » — Варна.

ԱՌԻՔԷՆ ՕԳՏՈՒԵՑԻՔ



ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թ.Ա.ՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՑԹԸ ԱՐԱՐՈՒԱԾ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆԻ

Սոյն գիրքը ուր 120 էջերէ կը բաղկանայ և մաքուր սուրճ
գրուածեամբ, փոխանակ 1 ֆրանքի

50 սանթիմի կը ծախուի,

գիմիւ «Արեւելեան» տպարան Օննիկ Բարսեղեանի, Վառնա:

Փոսթի ծախքը՝ 10 սանթիմ՝ գնողներու վրայ է, զրամի փոխա-
քէն նամակագրոյժ կ'ընդունուի:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ . Բ Ա Ր Ա Ն Ե Ղ Ե Ա Ն Ի

—*— Վ Ա Ռ Ն Ա —*

Երկրորդ քաղ, Շիրազնսխա փողոց, (Մագաղղ յէշմէի կից)

Կը տպագրուին հայերէն, պուլկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցետուն, հասցէտուն, հարսանեկան հրաւիրագիր, տղարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, դիրք, լրագիր, եւ այլն:

Գունաւոր և ոսկեղօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տասեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

Մ Ե Յ Խ Ն Ա Մ Ք Ե Ի Մ Ա Ք Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Գ Ի Ն Ե Ի Ը Յ Ո Յ Թ Գ Ի Ի Ը Մ Ս Տ Յ Ե Լ Ի

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նետարեամբ և փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

11 Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).

